

ԿՐՕՆԱԿԱՆ (ԴԱՍԵՐ ԱԿԵՏԱՐԱՆԷՆ)

ՀԱԼԱԾԱՆՔԸ

Երանի՜ որ հալածեալ իցեն ժամն
արդարութեան, զի նոցա է ար-
հայութիւն երկնից (Մթ. Ե. 10):

Ութերորդ Երանի՜ն է ասիկա, որ կ'ուղ-
ղուի արդարութեան համար հալածուող-
ներուն:

Չորրորդ Երանի՜ն ուղղուած էր արդա-
րութեան քաղցն ու ծարաւը ունեցողնե-
րուն: Մենք իր կարգին բացատրեցինք թէ
արդարութիւնը զազափար մըն է (տե՛ս
Սիոն 1929, էջ 230-233), որուն ըմբռնումը
և գործադրութիւնը նպատակն է Աւետա-
րանին և քրիստոնէական կեանքի նկարա-
գրին ամէնէն բարձր զիծը:

Արդարութիւնը հիմն է խաղաղութեան:
Փրկիչը Երանի՜ կարգաց անոնց որ այդպիսի
արդարութեան մը քաղցն ու ծարաւը ու-
նին. և հիմայ անգամ մըն այ անդրադառ-
նալով միւսնոյն նիւթին՝ Երանի՜ կը կար-
դայ անոնց, որ ո՛չ միայն քաղցն ու ծա-
րաւը ունին արդարութեան, այլ նաեւ կը
հալածուին անոր համար:

Հալածանքը բաղմամաստ բառ մըն է և
իր սահմանն ալ բաղմազան: Մարդիկ կըր-
նան հալածուիլ այլեայլ կերպերով և այլ-
եայլ պատճառներով: Ասիկա յայտնի է:
Եւ այս հալածանքներուն համար չէ որ ե-
րանութեան պիտի արժանանան անոնք:
Աւետարանի Երանի՜ն անոնց համար է որ
կը հալածուին արդարութեան համար. ու-
րիշ խօսքով՝ հալածանքը չէ որ կ'երանուի,
այլ հալածանքին նպատակը: Եւ հոս Առ-
դարութիւնն է այդ նպատակը. արդարու-
թիւնը իրրեւ գազափար, արդարութիւնը
իրրեւ իրողութիւն, արդարութիւնը իրրեւ
Աւետարան և իրրեւ Աստուծոյ Թագաւո-
րութիւնը:

Եւ այս պարագային հալածանքը կուգայ
ներսէն, այսինքն այն միջավայրէն ուր կը
գտնուիս, և ո՛չ թէ դուրսէն օտար թըշ-
նամիներէն, որ հեռու են քեզմէ:

Ի հարկէ Տէր Յիսուս-Քրիստոս աչքի
տուց և ունէր պայմանները այն միջավայ-
րին, ուր ինքն կ'աւետէր Աստուծոյ Թա-
գաւորութիւնը և կը հալածուէր ասոր հա-

մար: Արեւի պէս ժայլուն իրականութիւն
մը յայտնուած էր Աստուծոյ Թագաւորու-
թեան հոգեւորմով, և կը հալածուէր այդ
յայտնութիւնը: Արդարութիւնը կը քա-
րողուէր Փրկչին յայտնութեամբը և սա-
կայն կը հալածուէր արդարութիւնը թէ՛
նոյն ինքն Փրկչին վրայ և թէ՛ այն սակա-
ւաթիւ անձերու վրայ, որոնք կը հետեւին
արդարութեան Աւետարանին: Հո՛ս է բուն
արժէքը հալածանքին, որ կ'երանուի:

Այս հալածանքը հուրի եւ սուրի հա-
լածանքը չէ: Ատոր ատեն կայ դեռ: Հոսմի
հեթանոսութիւնը կայսերական ուժով օր-
մը պիտի կազմակերպուի՝ զարնելու հա-
մար Քրիստոնէութիւնը: Եւ այն ատեն
մարտիրոսական արեւնն է որ պիտի կնքէ
արդարութեան դատին պաշտպանութեան
հրովարտակը, ինկողներու մաքուր ճա-
կատներուն վրայ:

Միտքս լաւ հասկցնելու համար պիտի
ըսեմ թէ գազափարի հալածանքն է տու-
կա, որ կ'երանուի:

Սիրահարն ևս արդարութեան, կը նա-
խառուի միջավայրի մէջ, ուր կը ծաղ-
րուի արդարութիւնը:

Կը հաւատաս Աստուծոյ, և ահա կ'ա-
նարկուի ծանօթներէդ և բարեկամներէդ:
Կը ծագայիս Աւետարանին, և ծիծա-
ղելի կը գտնենք քեզ:

Ձեռ քաշուի՜ր ճշմարտութիւնը խօսելէ
և վրադ կը խնդան սխալ կեանքին փոր-
ձառուները:

Եւ այս բոլորը՝ կերպերն են արդարու-
թեան գէժ մղումը հալածանքին, և Երա-
նի՜ն ուղղուած է այսպիսի հալածեալներուն:

Քրիստոնեայ մարդուն կեանքը պայքար
մըն է արդարութեան գազափարին պաշտ-
պանութեան համար: Ան կուրծք կուտայ
հալածանքի այն կերպերուն, որոնց կ'են-
թարկուի ուղղակի կամ անուղղակի:

Աւետարանը օր մը իրապէս պիտի թա-
գաւորէ այս երկրագունդի վրայ, որովհետեւ
արդարութեան Աւետարանն է ան և տա-
ռապեալ մարդկութիւնը պէտք ունի ար-
դարութեան յաղթանակին: Առաւել կ'ըսէ.
Հալածուի՜ր սարսուռն և: Թերեւս Աւետարա-
նը իր պատմական կեանքին ամէնէն փա-
փուկ մէջ չըջանը կ'անցընէ այս պահուս
երկրագունդի վրայ, երբ պաշտօնական
հալածանքի մը նշաւակ եղած է ԿՐՕՆՔԸ
Խորհրդային Երկիրներու մէջ: Բայց դեռ

ո՛րչափ աշխարհներ կան, բոլորովին հետի խորհրդային ազգայնություններէ, և սակայն այդ աշխարհներու մէջ արդարութեան Աւետարանը կ'արհամարհուի ամէն օր, և Փրկիչը միշտ կը չարարուի և կը վիրաւորուի անտարբերներու, սոցեաներու, իմաստակներու մտքին, խօսքին և գործին մէջ: Եւ կը հալածուին անոնք որ կ'ողորին և կը մաքառին այս դժբախտութիւններուն դէմ: Դաշոյնի և հրազենի հալածանքին մէջ կարելի էր փոխադարձ զէնքով մը զիմազրել, և թէ նոյն իսկ անհաւասար ըլլար մարանչումը: Եւ այն առիթի ահռելի է բարոյական հալածանքը արդարութիւնը սիրողներուն դէմ, և անշուշտ այս է պատճառը որ կ'երանուին անոնք:

Եւ այս հալածանքը կը մղուի մեր աշքերուն առջև, մեր եկեղեցիներուն, մեր տուններուն մէջ, մեր ընկերային կեանքի շրջանակներուն մէջ, մեր դպրոցներուն շուրջ, մեր մամուլին մէջ, մեր ակումբներուն մէջ, մեր կուսակցութիւններուն և կազմակերպութիւններուն մէջ, ամէն տեղ ու ամէն կողմ, ուր որ հայ կայ:

Երանի՛ անոնց որ այս պայմաններու մէջ արդարութիւնը կը սիրեն, կը ծառայեն անոր, մահաւանդ կ'ապրին ատով և կ'ոգեւորուին:

Աւետարանին, հեռաբար և Բրիտանիոյ թեմային ամէնէն բարձր, ամէնէն մեծ, ամէնէն փրկարար և ամէնէն թանկագին արժէքը կը կայանայ մարդիկը անհատաբար և հաւաքաբար դաստիարակելուն մէջ արդարութեան աստուածային սկզբունքներով: Քաղաքային օրէնքներ աղարտութիւնը կը դործագրեն տուգանքով և տանջանքով: Այդ արդարութիւնը իհարկին կրնայ կաշառուիլ և վրիպիլ իր նպատակէն: Աւետարանին Արդարութիւնը չի կաշառուիր, չի կրնար կաշառուիլ ոեւէ գնով և կերպով: Վասն զի անիկա նոյն ինքնակարգութիւնն է քրիստոնեայ մարդուն. և եղծումը այդ նկարագրի զիծերուն՝ ինքնին դատապարտութիւնն է եղծանողին, բարոյական մահը անոր:

Կ'արժէր որ մարդիկ քրիստոնեայ ըլլալին միայն և միայն աստուածային արդարութեան սկզբունքներով դաստիարակուելու համար և զիտնային հալածուիլ — «վասն արդարութեան»:

Երանի՛ այնպիսիներուն:

Բ. Ե.

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ Ի Ս. ԳԻՐՍ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Բնեցեղի գիրք: ԹԳ. 5, 39:

Ե.

«Զի ԴՈՒՔ ՅԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԿՈՉԵՅԵԱԼ ԷՔ, ԵՂԻԱՐՔ» (Գղ. 5, 13):

3.

(Շար. Տե՛ս վեր. հջ 73)

Իսկ արդ, հարկ է դալ ի խնդիր մարդկեղին կամաց ստանձինն, և բուն իսկ որպիսութեան, չափու և պայմանաց ազատքան նորին:

Արդ՝ զի՞նչ են կամք, և զի՞մարդ և ի՞նչ խի՛ք ազատ են:

Կամքն են կարողութիւն կամելոյ, ապա՝ յայտարարութիւն այսր կարողութեան ի գործելն և յանելն, նոյնպէս և արտայայտութիւն սորին ի խորհուրդս և ի զգայմունս: Պատշաճ թուի արդեւք տալ զսահման կամաց համառօտիւ նաեւ այսպէս. կամքն են բովանդակութիւն կամ գումարութիւն անկնայն համաժամանակ կամերութեանց:—

Սակայն խնդիր այն է թէ կամքն արդեւք բնա՛ւ իսկ ստուգիւ ազա՛ն է, և ո՞րպէս կը գործէ. այսինքն, համառօտ իսկ ստել, մարդս ունի՞ իրաւունս և պարտական և հարկեա՛լ է անձամբ զանձն պատասխանատու համարել վասն գործոյ իրիք, և կամ նա ինքն լոկ մենքենական օրինակաւ կը գործէ իրեւ անգամ յանձնման շղթայի կամ շարի բնական պատճառական կապակցութեան իրաց:

Առ այս կան երկու վարդապետութիւնք միմեանց ընդդիմականք, որք կոչին՝ որոշականութիւն և անորոշականութիւն:

Ի՛նչ, անորոշականութիւն, կը հաստատէ թէ մարդկեղէն կամքն կախեալ է միայն զներքին զրդիչ որոշիչ պատճառաց մտաց կամ իմացութեանց, և ըստ այնմ մարդկեղէն ինքնակամ գործողութեանց և արտաբերութեան բուն հիմն և զրդիչ զօրութիւնն հաստատեալ է ի կամս իսկ ինքնին, զերծ յոր և է արտաքին պատճառէ: Այս է՝ կամայական իմն անձնիշխանութիւն: